

**«Դիլիջանի կենտրոնական դպրոց»
կրթական հիմնադրամ**

**Ֆինանսական հաշվետվություններ
2017թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամի (այսուհետ՝ «Կազմակերպություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՎՄՄԽ Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծին վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀՎՄՄԽ Վարքագրին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Այլ հանգամանք

Կազմակերպության 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2017թ. ապրիլի 13-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատում, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Կազմակերպությունը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են վերահսկել Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին ամոլորակարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում՝ ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որոնք կարող են լուրջ կասկածներ հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Կազմակերպության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արագացում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած էական հարցերի, այդ թվում աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:


Արամ Հովհաննիսյան
Գլխավոր տնօրեն
«Էյ-Էյ-Էյ Աուդիտ» ՓԲԸ
30 մարտի 2018թ.




Լիլիթ Հովհաննիսյան
Պատասխանատու աուդիտոր

«Գլխիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	4,566	5,059
Ոչ նյութական ակտիվներ	9	1,267	1,439
Հետաձգված հարկային ակտիվներ	10	1,257	1,314
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		7,090	7,812
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		556	210
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11	905	4,430
Բանկային հաշիվներ		32,578	41,236
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		34,039	45,876
Ընդամենը ակտիվներ		41,129	53,688
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կուտակված վնաս		(5,951)	(6,247)
Ընդամենը սեփական կապիտալ		(5,951)	(6,247)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	898	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		898	-
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ		190	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	45,992	59,935
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		46,182	59,935
Ընդամենը պարտավորություններ		47,080	59,935
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		41,129	53,688

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2018 թվականի մարտի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արամ Մեհրաբյան
 Գործադիր սնօրեն



Գրիգոր Գաբրիելյան
 Գլխավոր հաշվապահ

*«Իլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

հազ. դրամ	Ծնթգ.	2017թ.	2016թ.
Հասույթ	5	155,965	170,168
Այլ եկամուտներ		68	-
		<u>156,033</u>	<u>170,168</u>
Փոխհատուցում աշխատակիցներին		(144,806)	(147,394)
Մանրի կազմակերպման ծախսեր		(108)	(12,847)
Այլ ծախսեր	6	(11,265)	(10,983)
Գործառնական գործունեությունից վնաս		<u>(146)</u>	<u>(1,056)</u>
Տոկոսային եկամուտ		499	384
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		-	(4)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը		<u>353</u>	<u>(676)</u>
Շահութահարկի գծով ծախս	7	(57)	(20)
Շահույթ/(վնաս) տարվա համար		<u>296</u>	<u>(696)</u>
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ շահույթ/(վնաս) տարվա համար		<u>296</u>	<u>(696)</u>

«Վիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
 Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2016թ. (վերաներկայացված)	(5,551)	(5,551)
Ընդամենը համապարփակ վնաս		
Վնաս տարվա համար	(696)	(696)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	(696)	(696)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016թ.	(6,247)	(6,247)
Մնացորդը առ 1 հունվարի 2017թ.	(6,247)	(6,247)
Ընդամենը համապարփակ վնաս		
Շահույթ տարվա համար	296	296
Ընդամենը համապարփակ շահույթ տարվա համար	296	296
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017թ.	(5,951)	(5,951)

«Գլխիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	2017թ.	2016թ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Տարվա շահույթ/(վնաս)	296	(696)
<i>Մշտություններ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,995	3,401
Ֆինանսական եկամուտ	(496)	(384)
Շահութահարկի գծով ծախս	57	20
Գործառնական շահույթ մախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	2,852	2,341
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	3,525	(2,567)
Պաշարների փոփոխություն	(346)	718
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(13,412)	20,564
Շնորհներում փոփոխություն	190	-
Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ստացված դրամական միջոցներ	(7,191)	21,056
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Բանկային ավանդի (ներդրում)/մարում	-	10,000
Ստացված տոկոսային եկամուտ	4	650
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,471)	(1,333)
Ներդրումային գործունեությամբ (օգտագործված)/ստացված դրամական միջոցներ	(1,467)	9,317
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Փոխառություններից մուտքեր	525	48,000
Փոխառությունների մարում	(525)	(48,000)
Ֆինանսական գործունեությամբ (օգտագործված)/ստացված դրամական միջոցների հոսքեր	-	-
Բանկային հաշիվներում մնացորդների զուտ (նվազում) /աճ	(8,658)	30,373
Բանկային հաշիվների մնացորդները տարեսկզբի դրությամբ	41,236	10,863
Բանկային հաշիվների մնացորդները տարեվերջի դրությամբ	32,578	41,236